ներով այստեղ իրար կողք-կողքի տուած են մեծամեծ այգեստաններ, հարաւից-հիւսիս Խոխմելի, Տոպրեակ, Յարուտ, Անարետ, Տամլանա, Սադրուէ, որոնք ընդհանուր անունով են Ցրիա կամ Ցուրիա: Ցրիայի արեւմտեան բարձունքում կանգնած են Բարբարետի, Կենիա, Կուոն եւ Մերսուանի լ-ը, որոնցից իջնում է նոյնպէս Զիխիլետի առուն, որ գնում է ոռոգելով Դերէ-Մէհլէ, Արդվինի ալեւելեան այգիները եւ թափւում է քաղաքի մօտ Ճորոխը:

Ինչպէս նկատելի է, միջին դարերում Արդվինը աւելի վաճառաշահ աւանի, դորձարանական կենդրոնի դեր է կատարել, քան թէ Ոստանի: Բնիկները իրենց աւանը՝ քաղաք են կանչում, որն ունեցել է այնպիսի դիրք, որ իսկապէս արժանացել է այդ անուան: Ճորոխի ափին Կորձուլ կոչուած արուարձանը այնքան հին չէ, որքան հին են Վերի Շիկենիխովի առուի շուրջը կապուած օձապտոյտ եւ կեռման բուրջերն ու բեղենները, որոնք ցոյց են տալիս, թէ նախնական չրջանի բնակավայր է: Զուսի հին տաճար, եղածն էլ քանդուել-հողին է հաւասարուել եւ նորն են չինել. բայց այլ եւ այլ բլրակներ կասկածներ են դարթեցնում. հարկաւոր է պեղել եւ եզրակացութեան հասնել: Ինչպէս ճարպիկ են Արդվինցիները իրենց պատրաստած դրծուածները եօթը սարից անցնկացնելու, եօթը ձորեր ման ա-